առաջնորդութեամբ իմով, այսմ դարմանել. այլ այժմ որ հանդերձեալս եմ գնալ, բան եդի ընդ եղբօրս իմոյ, (ցուցանելով զպատրիարքն) գուն դնել այսմ, զոր ինչ ուսուցէ, և որպէս առաջնորդեսցէ ձեզ, լուիջիք իբրև իմոյ բերանոյ։ Եւ դարձեալ խօսեցեալ է առ իշխանս, թէ ես զդաւանութեանս իմոյ թուղթ գրեցի առ գահն հռոմայ, բայց յերթալս իմում, կամիմ գրել միւսանգամ զլիազոյնն։... Զփոյթ կալեալ ըստ հրամանի Գերյարգութեանդ, գնեցի զտպեալ գիրս ոմանս, որք ոչ գտանէին առ մեզ. և բաց յայնմանէ զոմանս պիտանի ձեռագիր գրեանս ի գրեանցն մաղաքիայի, որոց առաջինն է Սարգիս շնորհալւոյն մեկնութիւնն Կաթուղիկեայց ձեռագիր՝ փառակազմ արծաթազարդ, յորում չատ որոնեալ ոչ գտի զայն վրիպակ բանսն, որ ի տպագրի ածին. վասն ոչ հայելով ի ծախսն, գնեցի զայն 18 խուռչի. մանաւանդ զի յաւելեալ էր յայն և այլ գիրք մեկնութեան կաթուղիկեայց արարեալ ի հնագոյն սրբոց հարց, նշանակելով զիւրաքանչիւրոց անունն։ Երկրորդն մեկնութիւն չորեքտասան թղթոց պօղոսի արնրեալ ի յօհաննէ ոսկեբերանէ և յեփրեմէ ասորւոյ։ Երրորդն մեկնութիւն յեսուայ դատաւորաց, թագաւորաց և դանիէլի, հաւաքեալ ի մեկնութեանց սրբոց հարց։ Չորրորդն գիրք եւագրի զվարուց. Հինգերորդն, գիրք Նիկիոյ և կոստանդնուպօլսի ժողովոցն, թարգմանեալ. Վեցերորդն, Ոսկիփորիկ անուն. գիրք խրատուց և կանոնաց գրեալ վաղնջուց, որ է իբրու բարոյականն Հայոց, յորում են և Կանոնք առաքելոց։ Եօթներորդն ձեռագիր չարական մի պատուական, և տօմար և տօնացոյց ձեռագիր։ Զայս ամենայն գնեցի, մեծագոյն մասամբ փոխանակելով ընդ գրեանց, և սակաւ մի ևս դրամով։ Իսկ ի մէջ տպագրեալ գրեանց գընեցի զպօղոս տարոնացւոյն գիրս լի հակառակաբանութեամբ, որ ոչ գտանիւր ի ցանկի։ Այլ և զբուզանդ...։ Զմայր մաշտոցն դեռ որոնեմ. և զամենայն, զոր միանգամ յանձնեալ է գերյարգութիւնդ ի թղթի, անմոռաց փութամ կատարել։...

Ցամի տեառն 1753 Նոյ. 30 Ամենապատիւ հայրութեանդ
[Կ. Պոլիս] Տրուպ ծառայ Հ. Վրթանէս [Ասկէրեանց]

## ՃՀԱ.

*Պոլսոյ մէջ պատահած հսկայ հրդեհի մը նկարագրութիւնը կը կարդանք հետևեալ նամակին մէջ։*

*Ցարգոյապատիւ և գերապայծառ տեառն տեառն Ստեփաննոսի*
*վարդապետի և արբայիոր խնդալ ի տէր*

... ի Թ.երորդ մարտի ի մէջ գիշերի... չոգայ ի սամաթիա. ահա եկ հուր մեծ ի գործարանաց տպարարաց, այսինքն պասմաճոց, որք արտաքոյ պարսպի Վրլանկայի առ ծովեզերբն, և բորբոքեալ ի չնչելոյ սաստիկ հողմոյ հարաւայնոյ այրեաց զամենայն չինուածսն զայնոսիկ, և անտի անցեալ յայսկոյս ի ներքս պարսպին վառեցաւ վաղվաղակի իբրև զժամս ութ, և այրեաց աւելի քան զերեք հազար տունս, յորոց բազումք էին տունք հայոց՝ մանաւանդ ուղղափառաց. զի այրեաց ի պարսպէ անտի, այսինքն ի հիսարտիպէ մինչև ի զընտանտեղէն համամն, և մինչև ի մուսալլայ, և ի ճիւճէ չէշմէն, և անդր ևս մօտ յեկեղեցին հայոց։ Բազումն այրեցան կենդանւոյն ի հուր անդր, և բազումք մազապուր մերկանդամ զերծեալ անկան յաղքատութիւն մեծ։ Անդ էր տեսանել զողորմ աղէտի իբրև զօր դատաստանի գյանկարծակի թշուառութեանն պատուհաս, ծերոց և տղայոց, մանկամարդաց և հիւանդաց, զի կէսք կոխան լինէին և կէսք ի հուր կիզուին վասն գիշերոյն մթութեան և վասն հողմոյն սաստիկ չնչելոյ, և վասն տանց խտութեան և ճանապարհացն անձկութեան։ Իսկ ժանտախտն դեռ կայ մնայ ի պէկօղլու, ուր բազումք մեռան ի փրանկաց և ի յունաց...։

Ցամի տեառն 1754 Մարտի 13
ի կոստանդինուպօլիս

Անպիտան ծառայ
Հ. Իգնատիոս [Խաչատուրեան]